7 ապրիլի 2011 թվականի N 361 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1038-Ն որոշման հավելվածի Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «060100» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

060100	Բուժական գործ	62	Բժշկագիտության բակալավր
		68	Բժիշկ
		68.1	Բժշկության մագիստրոս (հանրային առողջություն)

».

2) «060200» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

060200	Ստոմատոլոգիա	62	Ստոմատոլոգիայի բակալավր
		68	Բժիշկ-ստոմատոլոգ

».

3) «060300» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

060300	Դեղագիտություն	62	Դեղագիտության բակալավր
		68	Դեղագիտության մագիստրոս

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. ապրիլի 14
Երևան